# Ազգ Azg

18 ՕԳՈՍՏՈՍ 2007 ՇԱԲԱԹ 148 (3800)







ԱՍՏՂԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

## Անցյալին համարժեք ներկայի պահանջով

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բյուրականի աստղադիտարանի տնօրեն

***Օգոստոսի 20-25-ը Երեւանում կանցկացվի եվրոպական եւ հայկական աստղագիտական ընկերությունների համագումարը «Մեր անկայուն տիեզերքը» խորագրով: Համագումարին մասնակցելու են 37 երկրների 300 գիտնականներ, 40 բարձրաստիճան հյուրեր: Համագումարի ընթացքում տեղի կունենան 8 գիտաժողով եւ 6 հատուկ նիստ: Սա ցուցիչ է հայ աստղագիտության ներկայի՝ որպես փառավոր աստղագիտական անցյալի ժառանգորդի: Հայ աստղագետներն այսօր փորձում են ամեն ինչ անել, որպեսզի հայկական աստղագիտության մասին չխոսվի անցյալ ժամանակով:***



Բյուրականի աստղադիտարանը մեր հանրապետության առավել հայտնի գիտական կենտրոններից մեկն է, որը 2006 թ. բոլորեց իր 60 տարին: Անցած վեց տասնամյակների ընթացքում Բյուրական գյուղի անվանումը հասել է աշխարհի բոլոր ծայրերը, որտեղ գոյություն ունեն աստղաֆիզիկական կենտրոններ: Այդ ընթացքում Բյուրական են այցելել ինչպես պետական ու գիտական պատվիրակություններ, այնպես էլ բազմահազար դպրոցականներ, մեր հանրապետության ու այլ երկրների քաղաքացիներ: Այսօր նույնպես այդ հոսքը շարունակվում է: Եվ շարունակվելու է, քանի որ դեր են խաղում աստղադիտարանի ոչ միայն զուտ գիտական նվաճումները, այլեւ այն, որ Երեւանի աստղացուցարանի բավականին անհասկանալի, բայց հաջողված ոչնչացումից հետո այլեւս մենք աստղագիտությանը հաղորդակցվելու այլ տեղ չունենք:

Աստղադիտարանի հետագա գոյությունն ու հաջողություններն էապես կախված են երկու կարեւոր բաղկացուցիչներից: Դրանցից առաջինն, անկասկած, աստղաֆիզիկոսների նոր սերնդի պատրաստումն է, որը շատ կարեւոր խնդիր է հատկապես գիտության հանդեպ ոչ այնքան բարյացակամ վերաբերմունքի մեր ժամանակաշրջանում: Դա առանձին խոսակցության նյութ է, որին, հույս ունեմ, դեռ կանդրադառնանք: Երկրորդը, որն, իմիջիայլոց, կախված է առաջինից եւ էապես ազդում է առաջինի վրա, դիտողական գործիքների գոյությունն ու ժամանակակից մակարդակով աշխատանքն է: Գերազանց աշխատող աստղադիտակն իր համապատասխան հարմարանքներով պակաս գայթակղիչ չէ գիտությամբ մուտք գործող երիտասարդի համար, քան բարձր աշխատավարձը:

Տես էջ 4

ԱՅՑ

## Այսօր Հայաստան է ժամանում ԻԻՀ փոխնախագահ Մոհամմադ Ալիաբադին

Ինչպես տեղեկացրել են ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, օգոստոսի 18-ին Երեւան կժամանի Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի տեղակալ, Ֆիզիկական կուլտուրայի կազմակերպության նախագահ Մոհամմադ Ալիաբադին (Mohammad Aliabadi): Այցի ընթացքում նախատեսվում են Իրանի նախագահի տեղակալի հանդիպումները ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Հայաստանի փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի, ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանի եւ Հայաստանի Ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանի հետ: Այցի ընթացքում Իրանի նախագահի տեղակալը կմասնակցի նաեւ Համահայկական չորրորդ խաղերի բացման արարողությանը:

ՀԱՄԱՌՈՏ

### Ավտովթար Երեւան-Վանաձոր ճանապարհին

Երեկ երեկոյան ժամը 8-ի մոտ միկրոավտոբուս է շրջվել Երեւան-Վանաձոր ճանապարհին: Ըստ նախնական տեղեկությունների, միկրոավտոբուսում եղել է սփյուռքահայ ընտանիք, վիրավորվել է 6 մարդ, ներառյալ վարորդը: Վիրավորները փոխադրվել են հիվանդանոց: Բարեբախտաբար նրանց վիճակը ծանր չէ:

### Հաջորդ շաբաթ կվերսկսվի Երեւանի կենտրոնի բանկոմատների սպասարկումը

Հաջորդ շաբաթ կավարտվի Երեւանի Տիգրան Մեծի պողոտա-Խանջյան փողոց, Վարդանանց-Խանջյան, Նալբանդյան-Ալեք Մանուկյան-Իսահակյան փողոցների խաչմերուկներում «Արմենտել» ընկերության մալուխների տեղափոխումը, ինչը կապված է նշված խաչմերուկներում ստորգետնյա անցումների շինարարության հետ: Այս մասին հայտնեց «Արմենտել»-ի հասարակայնության հետ կապերի տնօրեն Հասմիկ Ձուլֆիյանը: Ըստ «Արմենիան քարդ» ընկերության տեխնիկական բաժնի աշխատակից Արթուր Հակոբջանյանի, մալուխների տեղափոխման աշխատանքների պատճառով օգոստոսի 15-ից դադարեցվել է հիմնականում Երեւանի կենտրոնում գտնվող մոտ 110 բանկոմատներով սպասարկումը:

### Հայտնաբերվել են նռնակներ

Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի զինվորական զորամասի մոտակայքում ոստիկանները հայտնաբերել են 12 նռնակ: Հաղորդվում է, որ «Դ-1» տիպի նռնակները գտել են տեղի բնակիչները եւ այդ մասին հաղորդել ոստիկանության Սեւանի մասնաճյուղ: Հայտնաբերված նռնակներից 6-ը եղել են առանց պայթուցիչի: Նռնակները սակրավորները ոչնչացրել են տեղում, քննություն է սկսված:

## Ռուսաստանը օդ է բարձրացնում իր ռազմավարական նշանակության ռմբակոծիչները

Ինչպես հաղորդել է Ռիա-Նովոստի գործակալությունը, երեկ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ իր երկիրը վերսկսում է ռազմավարական ինքնաթիռների հեռահար թռիչքները, որոնք ընդհատվել էին 1992 թ.-ից: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ռուսաստանի նախագահը ասել է, որ «այսօր օդ են բարձրացվել 14 ռազմավարական հրթիռակիրներ, ինչպես նաեւ ապահովման եւ բենզալիցքավորման ինքնաթիռներ: Սկսվել է ռազմական հերթափոխ, մշտական սկզբունքով, որին մասնակցում է 20 ռազմական ինքնաթիռ»: Ըստ նախագահ Պուտինի, ինքնաթիռները օդում կլինեն 20 ժամ: «Պարեկությունը կկատարվի ակտիվ նավագնացության եւ Ռուսաստանի համար տնտեսական նշանակություն ունեցող շրջաններում, այսօրվանից պարեկությունը կկատարվի մշտական հիմքի վրա», հայտարարել է Պուտինը: Վերջինս հիշեցրել է, որ 1992 թ.-ից Ռուսաստանը դադարեցրել էր նմանատիպ պարեկությունը միակողմանի կարգով, սակայն «ոչ բոլոր երկրներն էին հետեւել նրա օրինակին»: Ըստ Արեւմտյան լրատվամիջոցների, թռիչքների վերսկսումը պայմանավորված է Արկտիկայի պատկանելիության շուրջ Ռուսաստանի եւ մի քանի այլ երկրների միջեւ առաջացած վեճով:

### Ռուդոլֆ Խաչատրյանի աճյունը կամփոփվի Հայաստանում

Հայաստանի ժողովրդական նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի աճյունը Գերմանիայից կտեղափոխվի Մոսկվա, որտեղ նրա արվեստանոցում տեղի կունենա հոգեհանգստյան արարողություն, իսկ այնուհետեւ կտեղափոխվի Երեւան: Ինչպես լրագրողներին հայտնեցին Հայաստանի նկարիչների միությունում, Ռուդոլֆ Խաչատրյանի աճյունը վերջին հրաժեշտի համար կտեղադրվի Կամերային երաժշտության տանը:

### ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պատրաստում են ԼՂ իրենց հաջորդ այցելությունը

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի շարունակության առումով քննարկումները շարունակվում են: Ինչպես «Արմենպրես»-ին ասաց ՀՀ ԱԳ նախարարության մամուլի եւ տեղեկատվության վարչության պետ Վլադիմիր Կարապետյանը, որեւէ նոր հանդիպման վերաբերյալ վերջնական համաձայնություն դեռ ձեռք չի բերվել: ԵԱՀԿ մամլո խոսնակ Մարտին Նեսիրկին տեղեկացրել է, որ Մինսկի խմբի համանախագահները պատրաստում են ԼՂ հակամարտության տարածաշրջան իրենց հաջորդ այցելությունը: Ժամկետները դեռեւս հստակեցված չեն:

### Բուշի դուստրն ամուսնանում է ծխախոտի «արքայի» որդու հետ

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի երկվորյակ դուստրերից Ջեննան պատրաստվում է ամուսնանալ ծխախոտի «արքայի» որդու հետ: Ըստ տեղեկությունների, 25-ամյա Ջեննայի եւ նրա ընտրյալի՝ Հենրի Հեգերի նշանադրության արարողությունը տեղի է ունեցել օգոստոսի 15-ին: Հարսանիքի օրը դեռեւս որոշված չէ: Նախագահի ապագա փեսայի մասին շատ քիչ բան է հայտնի: Նրա հայրը՝ Ջոն Հեգերը, Վիրջինիա նահանգի ծխախոտային բիզնեսի «արքան» է: Ժամանակին նա զբաղեցրել է Վիրջինիայի փոխնահանգապետի պաշտոնը:

## Որքա՞ն է արժեւորվել դրամն անվանապես, որքա՞ն՝ իրապես

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դրա՞մն է արժեւորվում, թե՞ դոլարը արժեզրկվում: Վերջին տարիներին հաճախ ենք նման հարց տալիս եւ միանշանակ պատասխան կարծես թե չենք գտնում: Կամ որքա՞ն է դրամն արժեւորվել, նկատի ունենալով գների աճը: Այսինքն, որքա՞ն է կազմում դրամի իրական արժեւորումը: Նախ ներկայացնենք, թե ինչպես է փոխվել դրամ-դոլար փոխարժեքը 2004 թ.-ից մինչ այժմ, ապա փորձենք պատասխանել վերը նշված շատերի հարցերին:

2003 թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին 1 դոլարն արժեր 580 դրամ, սակայն արդեն այդ տարվա վերջին եւ 2004 թ.-ի սկզբին փոխարժեքը կայունացավ 1 դոլարը 570 դրամի սահմաններում: Դրամի կտրուկ արժեւորումը դոլարի նկատմամբ կամ դոլարի արժեզրկումը դրամի նկատմամբ սկսվեց 2004 թ.-ի ապրիլ-մայիսից, երբ մեկ շաբաթվա ընթացքում հասավ 1 դոլարի դիմաց 547-548 դրամի: Արդեն 4-րդ տարին այդ գործընթացը շարունակվում է: Ներկայումս 1 դոլարը շուկայում փոխանակվում է 335-338 դրամով: Փաստորեն, վերջին 3 տարվա ընթացքում հայկական դրամն արժեւորվել է 41-42 տոկոսով դոլարի նկատմամբ:



Պատասխանները բազմաթիվ են, ինչն էլ միաժամանակ պատկերացում է տալիս, թե ընդհանրապես որքանո՞վ է ճիշտ հարցադրումը՝ դոլա՞րն է արժեզրկվում, թե՞ դրամը արժեւորվում: Արտաքին պատճառներից հիմնականն ամբողջ աշխարհում ընթացող ամերիկյան դոլարի արժեզրկումն է եվրոյի եւ այլ փոխանակելի արժույթների նկատմամբ: Ներքին պատճառները մի քանիսն են՝ մասնավոր դոլարային փոխանցումների ներհոսքը Հայաստան (տարեկան մոտ 1 մլրդ դոլար), տնտեսական աճը Հայաստանում, որի արդյունքում մեր երկրի համախառն ներքին արդյունքը 4 տարվա ընթացքում կրկնապատկվել է, Կենտրոնական բանկի քաղաքականությունը դոլարայնացման նվազեցման եւ դրամի շրջանառության ծավալների ավելացման ուղղությամբ եւ այլն:

Տես էջ 3

